

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

**ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՆՈՐ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՒՄԸ**

1918 թ. առաջին կեսն ընդգրկող փոթորկալի և խռովահույզ օրերին, երբ հայ քաղաքական ղեկավարները նախ Տրապիզոնում և ապա Բաթումում բանակցություններ էին վարում թուրքերի հետ՝ հանուն հաշտության և խաղաղության, անփառատենչ և համեստ, բայց միաժամանակ անկոտորում կամքի տեր մի մարդ Երևանում դժվար, բայց հաստատուն քայլերով դնում էր հայոց անկախ պետականության հիմքերը՝ ելնելով այն ճիշտ և պատմականորեն արդարացված համոզմունքից, որ բոլոր դիվանագիտական հաջողությունների գրավականը հաղթական պատերազմն է:

Այդ մարդը Արամ Մանուկյանն էր:

Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) ծնվել է 1879 թ. Ղափանի շրջանի Ջեյվա կամ Ջնու գյուղում, աղքատ զինագործի ընտանիքում: Հոր չքավոր լինելու պատճառով ունեցել է դառը մանկություն: Նրա մեծ եղբայրը, որը դերձակ էր Շուշի քաղաքում, կարողանում է հոգալ եղբոր ուսման խնդիրները: Նախնական կրթությունը Սարգիսը ստացել է Շուշիի ծխական դպրոցներից մեկում, ուր աչքի է ընկել իր ջանասիրությամբ ու հաջողությամբ ուսման մեջ¹:

1890 թ. եղբոր ջանքերով Սարգիսն ընդունվում է Շուշիի թեմական դպրոց: Զգալով նրա ուսումնաստենչությունը՝ հոգատար եղբայրը, որը հազիվ էր հոգում իր բազմանդամ ընտանիքի օրվա ծախսերը, այնուամենայնիվ դրանք կրճատում է և մի կերպ հոգում ուսման վարձը: Ինչպես վկայում է Արամի գործընկերներից Արշալույս Աստվածատրյանը, նա արդեն դպրոցի երրորդ դասարանում, երբ 14 տարեկան էր, «ոչ միայն ուսուցիչների և ընկերների ուշադրությունն ու համակրանքն է գրավում, այլ և դրսի մարդկանց»:

Արամի դասընկերներն էին հայ ազգային ազատագրական պայքարի հետագա այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին Իշխանը, Մենակը, Իսաջանը, Թորգոմը և ուրիշներ: Նույն դասարանում էլ Արամը ընկերների հետ անդամագրվում է Հ.Յ. Դաշնակցությանը և դեռ ավելին՝ ընտրվում է այդ կուսակցության կազմակերպչական մարմնի լիազոր: Արամի և ընկերների կազմակերպչական աշխատանքները շուտով հայտնի են դառնում և նրանց դեմ են տրամադրում դպրոցի հոգեբարձությանն ու մասնավորապես՝ տեսուչ Բենիկ վարդապետին: Ավելին, դրվում է նրանց՝ դպրոցից հեռացնելու հարցը: Պայքարն այն աստիճանի է սրվում, որ բանը հասնում է ծեծկոտուքի: Արամը և ընկերները դպրոցից հեռացվում են և դեռ ավելին՝ նրանց տրվում է «գայլի վկայական», որը նշանակում էր՝ գրկվել որևէ ուրիշ դպրոցում ուսումը շարունակելու իրավունքից: Եվ սա է լինում պատճառը, որ Արամին մերժում են ընդունել Գևորգյան Ճեմարան:

¹ Արամը, մահվան հիսնամյակին առթիվ, Երևան, 1991, էջ 12:

Ծնողների միջնորդությամբ դպրոցի որոշումը փոխելուց հետո Արամը, Իշխանը և մի քանի ուրիշներ ընդունվում են Երևանի Թեմական Դպրոց, որն ավարտում են 1901-ին: Դպրոցն ավարտելուց հետո Արամը մեկնում է Բաքու, ուր լծվում է կուսակցական և կազմակերպչական խնդիրներին մինչև 1903 թ.:

Հայտնի է, որ մինչև 1903 թ. ողջ հայության ուշադրությունը հիմնականում կենտրոնացված էր Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրի վրա: Արամը այն քիչ գործիչներից էր, որ ձգտում էր Բաքվի գործունեության շրջանում բացահայտել հայության հանդեպ ցարիզմի ունեցած քաղաքականության էությունը և հայության գանազան խավերից (բանվորական, աշակերտական, արհեստավորական, մանր առևտրական) ստեղծում էր խմբեր՝ նրանց մատնանշելով ընդդեմ ցարիզմի պայքարի ձևեր (զանգվածային ցույցեր, գրավոր բողոքներ և այլն):

Եկեղեցական կալվածքների գրավման օրերին (1903 թ.) անցնում է Գանձակ, ուր իր նպաստն է ունենում տեղի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Այնուհետև, նույն թվականին, մեկնում է Կարս՝ թրծվելու նրա հնոցի մեջ: Արամի՝ Կարսում ունեցած գործունեությունն է՛լ ավելի էր հղկելու Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրների նկատմամբ նրա մոտեցումները և նպաստելու էր նրա՝ հետագայում այնպիսի ուղիով ընթացքին, որը հանգեցնելու էր ավելի արդյունավետ ավարտի և ընթանալու էր ավելի քիչ զոհողություններով:

Կարսում գործելու ժամանակաընթացքում (1903-04 թթ.) Արամը արագորեն ձեռք է բերում լայն հեղինակություն և, ինչպես վկայում է Ռուբենը, նրան է վստահում «քառոզական գործի ղեկավարությունը»:

1903-04 թթ. ողբերգական եղանակով՝ Արևմտյան Հայաստան առաքած զինատար կամ հայդուկային խմբերի ճակատագրի առումով: Մեկը մյուսի հետևից Երկիր էրն առաքվում խմբեր, որոնց մեծ մասը, սակայն, սահմանամերձ շրջաններում կռվի բռնվելով թշնամի ուժերի հետ՝ չէին հասնում իրենց նպատակին և նահատակվում էին կես ճանապարհին: Ոչ ոք չի կարող ժխտել այս խմբերի հերոսական ոգին, անձնուրաց կռիվները, հայրենիքի ազատագրության խնդրին անմնացորդ նվիրաբերությունը: Բայց ազատագրական պայքարի նման ընթացքից ոչինչ չէր շահում հայ ժողովուրդը: Ստույգ մահվան էր գնում մի սերունդ, որի անհրաժեշտությունը շատ էր զգացվելու գալիք դեպքերի ժամանակ:

Արամի համոզմունքները ազատագրական պայքարի նման ընթացքի վերաբերյալ կտրուկ կերպով փոխվեցին: Չէ՞ որ նա էլ ուներ իր կարևոր դերակատարությունը այդ խմբերի զինման և սահմանանցման առաքման գործում: Գրեթե ամբողջովին նահատակվելու էին Խանի և Նևրուզի խմբերը (1903 թ.), իր մանկության ընկեր Թումանի (Թորգոմ) «Որսկան» խումբը (1904 թ.), Կայծակ Վաղարշակի «Դժոխք» խումբը (1904 թ.) և այլն: Եվ այս բոլորից ոչինչ չէր շահել հայ ազգային ազատագրական պայքարը:

Այս բոլորը հասկանալով՝ Արամն արդեն գտնում էր, որ «զինատար խմբերով երկրի ժողովուրդը զինել անկարելի է, և որ դա նախ՝ քիչ արդյունք է տալիս, և հետո՝ մեծ աղմուկ է ձգում կառավարության և քուրտ աղաների մեջ»: Այս համոզմունքը ստիպում է նրան, ինչպես նաև իր ընկերներից ոմանց (Իշխան, Ռուբեն և այլոք) անցնել Երկիր և գործել միանգամայն այլ ճանապարհով: Կասկածանքով նայելով իր գործունեության արդյունավետությանը՝ նա թողնում է Կարսը և ճանապարհվում Երկիր (Վան):

Արամն իր՝ Վան մեկնումը պատճառաբանում է այսպես. «Սասունի գործը վիժված էր (նկատի ունի 1904 թ. ապստամբությունը - Ա. Ն.): Մշո դաշտում գործ վերսկսելը իմ ուժերից վեր էր: Ես նոր մարդ էի Երկրի համար, պիտի գնայի այնպիսի շրջան, ուր որոշ կազմակերպություն կար, փորձառու ղեկավար ընկերներ կային՝ նրանց ձեռքի տակ կամ նրանց հետ գործել կարողանալու համար: Թե՛ այս և թե՛ մանավանդ Պարսկաստանից Վան անցնելու դյուրությունները ինձ քշեցին դեպի Պարսկաստան»²:

Խոյուն ձ.Յ. Դաշնակցության ներկայացուցիչ Մալխասի ջանքերի շնորհիվ Արամն անցնում է Ս. Թադեի վանք: Դեպքերի բերումով չորս ամիս մնում է այստեղ, որից հետո վերադառնում է Սալմաստ (Ղալասար), ուր, միառժամանակ Սամսոն Թադևոսյանի մոտ մնալով, առիթից օգտվելով ծանոթանում է Ատրպատականի Կենտրոնական Կոմիտեի աշխատանքներին: Այնուհետև կրկին անցնում է Ս. Թադեի վանք, որտեղից Վան է ճանապարհվում 1905 թ. Հունվարի վերջերին:

Արամը Վան է հասնում 1905 թ. փետրվարի 6-ին: Այդ ժամանակ Վասպուրականում ձ.Յ. Դաշնակցության պատասխանատու գործիչներ էին Կոմսը (Վահան Փափազյան) (Շամի Կ. Կ.) և Իշխանը (Լեոնապարի Կ. Կ.): Վանում Արամը գործում է մինչև 1906 թ. վերջերը, երբ Իշխանի հետ մեկնում է՝ մասնակցելու համար ՀՅԴ 1907 թ. Ընդհանուր Ժողովին և գործում է միանգամայն արդյունավետ՝ ճիշտ կերպով ընկալելով տեղի կազմակերպչական նրբությունները և կարճ ժամանակում ձեռք բերելով տեղացիների սերն ու համակրանքը: Իսկ նրա գործունեությունն ընթանում է ՀՅԴ այն ծրագրի կետերն իրականացնելու ձգտումներով, որոնք արդեն պարտադիր էին Արևմտյան Հայաստանի ՀՅԴ գլխավոր գործիչների համար:

Ահա այդ ծրագրի կետերը.

«1.- Կազմակերպությունից կախված բոլոր միջոցներով դիմել անկախ, մասնակի ձեռնարկներն ու ժայթքումները վերացնելու:

2.- Կարևոր զինվորական ուժերը, որոնց ներկայությունը կարող էր գրգռել կառավարությանը և վիժման պատճառ դառնալ, նախապատրաստական շրջանին Երկրից դուրս հանել:

3.- Մեծ քանակությամբ զինված փախստական խմբեր չպահել:

4.- Զինված խմբերը փոխարինել զինված ժողովրդով, որ ամեն զենքի ընդունակ կազմակերպված ընկեր զենք ունենա, նստի իր տանը, իր գործին՝ պետք եղած ժամանակ գործի գլուխ անցնելու համար:

5.- Աշխատել արտասահմանից բերելիք զենքերը փոխարինել՝ տեղում զենք գնելու դյուրություններ ստեղծելով:

6.- Ժողովուրդը զինել իր սեփական միջոցներով, որովհետև, երբ զենքը իրենը չէ, մարդ առանձին հոգ չի տանում խնամելու կամ պաշտպանելու համար այն:

7.- Սահմանազրկի արշավանքները քիչ են օգտակար և նույնիսկ երբեմն վնաս բերող»³:

Սա փաստորեն այն ծրագիրն էր, որը կյանքի կոչելու համար տակավին անցյալ դարի 90-ական թվականների երկրորդ կեսից անդուլ կերպով աշխատում էին Գուր-

² Արամ-Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Բ հատոր, Լոս Անճելես, 1952, էջ 10:

³ «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր, 1923, թիվ 11, էջ 123:

գենն ու Հրայրը, և որը 1905 թ. հետո միայն բուն Արևմտյան Հայաստանի գործիչների համար դարձավ գործունեության պարտադիր ուղեցույց: Այլ խոսքով, այս կետերի իրականացումը նշանակում էր ընդհանուր ապստամբության ծրագրի իրականացում, որի համար հարմար առիթներ էին համարվում.

«ա.- Թուրքիոս որևէ մեկի հետ պատերազմի մեջ մտնելը:

բ.- Տագնապը:

գ.- Մյուս ազգերի շարժումների զուգադիպությունները և այլն»⁴:

Ի պատիվ Արամի պետք է շեշտել, որ նա Վանում գրեթե իրականացնում է վերոհիշյալ ծրագրի հիմնական կետերը: Մանրամասներից խուսափելով շեշտենք, որ նրա և իր ընկերների՝ Վանում ունեցած գործունեությունը հանգեցնում է հետևյալ հիմնական արդյունքներին:

Առաջին.- մարտական խմբերի ստեղծում Շամի Կ. Կ.-ի մեջ մտնող (Վան-Տոսպ, Բաշկալե, Աղբակ, Արճակ, Թիմար, Բերկրի, Արճեշ, Ալջավազ և Հայոց ձոր, որը հետո միացավ Լեռնապարհին) քաղաքների, թաղերի և գյուղերի մեջ, որոնց անդամների թիվը 7-15 հոգի էր՝ բոլորն էլ զենք կրելու ընդունակ և գաղափարական երիտասարդներ: Նրանց արգելված էր տարածում կռիվների մեջ մտնել, այլ՝ ինքնապաշտպանության դիմել հարկ եղած պարագային:

Երկրորդ.- Պարսկաստանով զենքի և ռազմամթերքի խաղաղ և անաղմուկ ներմուծում էշերի և ջորիների քարավաններով ու հայ և քուրդ շալակավորների միջոցով՝ որպես շուկայի ապրանք: Այս եղանակի շնորհիվ, որը Կոմսը կոչում էր «ծծման» եղանակ, Վանում մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք կուտակվեց: Ձենքերը պահվում էին հորերում և պատերի մեջ՝ խիստ գաղտնի պայմաններում:

Երրորդ.- Կրթական և դատական գործերի վերահսկում Կենտրոնական Կոմիտեի կողմից: Դատական գործերում անվորձ մարդկանց ցուցմունք տվողը կուսակցական փաստաբաններն էին, իսկ ուսուցիչները նշանակվում էին ենթակոմիտեների և Կոմիտեների կողմից: Գլխավոր դպրոցների ուսուցիչները նշանակվում էին Կենտրոնական Կոմիտեի կողմից: Հրատարակվում էին նաև խմորատիպ թերթեր:

Չորրորդ.- Հայ-քրդական հարաբերությունների բարելավում: Այս առումով Արամը գործում էր հետևյալ սկզբունքներով.

ա.- Քրդերը մեղմացնում կամ գրեթե վերացնում են իրենց հարստահարությունները, երբ տեսնում են, որ հայերը զինված են (պատահական չէ, որ հաճախ զինված խմբեր էին շարժման մեջ դնում՝ տպավորություն ստեղծելու համար).

բ.- Քրդերի հետ բարեկամության քարոզչություն (պրոպագանդա) էր տանում՝ հիմնականում ձգտելով հասնել նրանց չեզոքությանը.

գ.- Ձինված արշավախմբեր էր կազմակերպում և ազատում նրանցից որևէ գյուղ կամ բնակավայր (օրինակ՝ Ոզմի ազատագրումը):

Հինգերորդ - Վանում գործող մյուս հայ քաղաքական կուսակցությունների հետ համերաշխության ստեղծում: Այս մասին Կոմսը գրում է. «Արամի հետ ջանքեր գործ դրինք նաև ընդհանուր լեզու գտնելու և գործակցության հնարավորություն ստեղծելու հնչակյանների և, մանավանդ, արմենականների հետ»⁵:

⁴ Նույն տեղում:

⁵ Վ. Փափագյան, Իմ հուշերը, հ. 1-ին, Պոսթոն, 1950, էջ 350-360:

Արամի գործունեության ընթացքում կուսակցությունն այն աստիճանի էր հզորացել, որ փաստորեն կատարում էր պետության գործառնություններ: «1905-ի աշնանն էր, թե 1906-ի ձմռանը,- գրում է նա,- կազմակերպությունը այնքան էր ուժեղացել և այնքան ազդեցություն էր ձեռք բերել քաղաքում ու շրջաններում, որ մի հայտարարություն էր արել «Հրաման» վերադասությամբ»⁶: Այդ հրամանով արգելվում էին գիշերով թուրքերին այցելել, խմելը և օղի ծախելը, թղթախաղը, կեղծ դրամ կտրելը և այլն:

Արամը կարողանում էր դեպի կազմակերպությունը գրավել նաև չեզոք տարրերին: Այդ մասին Կոմսը վկայում է. «Ընդարձակեցինք նաև մեր հանդիպումների ցանցը «չեզոք» հայ շրջանակների հետ: Արամը ընդունակ էր լավ տպավորելու դիմացիին, համակրություն ստեղծելու և հետզհետե մոտիկացնելու մեր աշխարհին»⁷:

Կարծում ենք՝ այսքանը բավական է Արամի՝ Վանում ունեցած 1905-1906 թթ. գործունեության մասին կարծիք կազմելու համար:

1906 թ. դեկտեմբերին Արամը Իշխանի հետ դուրս է գալիս Երկրից՝ Վիեննա մեկնելու և ՀՅԴ Չորրորդ Ընդհանուր Ժողովին մասնակցելու համար: Ժողովին կարևոր մասնակցություն ունենալուց հետո նրանք կրկին վերադառնում են Վան և շարունակում իրենց արդյունավետ գործունեությունը: Սակայն շուտով, Դավոյի հայտնի դավաճանության պատճառով (1907 թ.), կառավարությունն առգրավում է բազում զենքեր և զինամթերք: Շատերի հետ ձերբակալվում է նաև ջրհորում թաքնված Արամը և բանտում մնում մինչև 1908-ի հուլիսյան Սահմանադրությունը, երբ ազատվում է՝ մեծարվելով երիթուրքերի կողմից: Կարելի է պնդել, որ, ի տարբերություն Իշխանի և Տարոնից Վան հասած Ռուբենի, Արամն սկզբնական շրջանում որոշ հույսեր է տածում Սահմանադրության նկատմամբ, բայց դա երկար չի տևում: Շուտով նա ընկալում է դրա կեղծ էությունը և հիասթափություն ապրում: Դրա վկայությունն է այն հանգամանքը, որ նա մերժում է օսմանյան խորհրդարանի անդամ ընտրվելու առաջարկը՝ իր տեղը զիջելով Կոմսին, այն դեպքում, երբ վերջինս խոստովանում է, որ «Այդ պարտականության մարդը Արամը կրնար լինել:...չէ՞ որ իր խառնվածքով, աննկուն, համարձակ ու անկաշկանդ՝ համառ պայքարող էր, որ իր թերի լեզվով իսկ կրնար խորհրդարանի բեմերին որոտալ բոցավառ խոսքեր՝ ուղղված պետության վարիչներին, ներկայացուցչական աթոռների վրա բազմած թուրք «երևելիներին», որոնցից շատերի ձեռքերը հավանաբար մաքուր չէին հայերի արյունն ու արցունքն»⁸:

Բայց, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ա. Աստվածատրյանը, «Արամը գերադասում էր մնալ բուն ժողովրդի մեջ այն համոզումով, որ այդպես ավելի օգտակար կլիներ ժողովրդին, քան խորհրդարանում նստած և «բոցաշունչ ճառեր ասելով»⁹:

Վստահորեն կարելի է պնդել, որ եթե բոլորը 1908 թ. շատ չանցած մտածեին Արամի նման և խորհրդարանական գործունեությամբ չոգևորվելով՝ ձեռնամուխ լինեին արևմտահայության արագորեն զինման աշխատանքներին, հայությունն այդքան դաժանորեն չէր ճաշակի եղեռնի սարսափները: Շնորհիվ Արամի խոհեմ գործելակերպի Վանը գրեթե փրկվեց 1915 թ. Եղեռնից:

Երբ Թուրքիան ներքաշվեց պատերազմի մեջ, Արամը և Ա. Վոսանյանը Վանում

⁶ Արամը, էջ 334:

⁷ Նույն տեղում:

⁸ Վ. Փափազյան, նշվ. աշխ., հ. 2, Պոսթոն, 1952, էջ 40-41:

⁹ «Հայրենիք» ամսագիր, թիվ 1, հունվար, 1963, էջ 29:

ընտրեցին մի գործելակերպ, որում ընդգծված էր կառավարությանը հավատարիմ լինելու հանգամանք ցուցաբերելը: Այս տեսանկյունից հետաքրքիր է Կովկասում սկսված կամավորական շարժմանը Արամի ցուցաբերած վերաբերմունքը: Ինչպես վկայում է Կոմսը՝ «նա թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կհամարեր կամավորական շարժումների կազմակերպությունը և մանավանդ գործոն մասնակցությունը՝ ենթարկվելով ռուսական բանակին»¹⁰:

Դեպքերը Վանում կտրուկ կերպով սկսում են զարգանալ 1915 թ. ապրիլի սկզբներից: Վանի նոր կուսակալ Ջևդեթի՝ Վասպուրականի հայությանը կոտորելու ջանքերը գալիս էին խորտակվելու՝ դիպչելով փորձառու Արամի անկոտրում կամքին և վճռականությանը:

Վանի ինքնապաշտպանության մանրամասն նկարագրությունը մեր նպատակի մեջ չի մտնում: Նշենք միայն, որ Իշխանի և Վռամյանի դավադրության զոհ դառնալուց հետո Արամը, նույն ճակատագրից խուսափելով, եղավ ինքնապաշտպանության հիմնական կազմակերպողն ու ներշնչողը: Ահա այդ մասին Վանի Զինվորական Խորհրդի քարտուղար Օննիկ Մխիթարյանի վկայությունը. «Զինվորական մարմնի և անոր հարակից օգնությունների, ինչպես նաև Վանի հերոսամարտի ամբողջ ծանրությունը և բարոյական ղեկավարությունը, սակայն, բնականորեն, կյինար Արամի վրա, որ այն օրերին, մասնավորապես Իշխանի և Վռամյանի կորուստեն հետո, կմնար միակ ապավեն ու ընտրյալ առաջնորդը Վասպուրականի պայքարող հայության»¹¹:

Երբ Վասպուրականի լեռնային շրջաններից 15 հազարից ավելի հուսահատ հայությունը թափվեց քաղաք՝ իր վրա ունենալով սովի ուրվականը, Արամը «առանց տատանվելու և մեկ վայրկյան իսկ հուսահատվելու, իր հզոր ձեռքով կազմակերպեց պայքարը սովի ու անոր հետևանքով ստեղծված անխուսափելի լքումի դեմ»¹²:

Վանի հերոսամարտը տևում է ապրիլի 6-ից մինչև մայիսի 3-ը, երբ Ջևդեթը դիմեց փախուստի, և Վան մտան հայ կամավորները՝ դաշնակցական Խեչոյի առաջնորդությամբ:

Ապրիլի 7-ին գորավար Նիկոլանի հրամանով կազմվում է Վանի Նահանգային Վարչությունը, իսկ Արամը նշանակվում է նահանգապետ: Մայիսի 8-ին Արամը դիմում է ժողովրդին, ուր կոչ է անում՝ «համախմբվել ամբողջ եռանդով կառավարության շուրջ՝ վերակազմակերպելու համար կյանքը քաղաքի և շրջանի մեջ, արժանի լինելու համար քառորդ դարե ավելի մղված պայքարի մեջ ընկած հերոսների հույսերուն ու հիշատակին և միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտոնի գիտակցությունը Փոքր Ասիայի այդ ծայրագավառի մեջ»¹³:

Նահանգապետ աշխատելու ընթացքում արդեն դրսևորվում են Արամի պետական մտածողություն ունեցող մարդու հատկությունները: Նա արագորեն ստեղծում է առանձին տեսություններ, մարմիններ և վարչություններ (տնտեսական, քաղաքական, կրթական, երկրագործական և այլն), որոնք ձեռնամուխ են լինում հայության առջև ծառայած խնդիրների լուծմանը: Կազմում են նաև գավառապետություններ, որոնց

¹⁰ Վ. Փափազյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 283:

¹¹ «Հայրենիք» ամսագիր, նշվ. համարը, էջ 29:

¹² Նույն տեղում, էջ 38-39:

¹³ Նույն տեղում, էջ 40:

թիվը հասնում է 14-ի:

Ինչպես հաստատում են ժամանակակիցները, «ընդամենը մի քանի օրվա մեջ Արամը կրցավ ոչնչեն, քառսեն ու ավերածութենեն, բառի իրական ու լայն առումով, ժողովրդական-վերաշինական կառավարություն ստեղծել, ստեղծագործական աշխատանքի լծել վանեցի, գավառացի թե կովկասահայ բոլոր կենսունակ ուժերը»:

Արամի այս աշխատանքների մասին լիարժեք պատկերացում կարելի է կազմել Կ. Մասունու նկարագրած՝ նրա և Ռոստոմի միջև Վանում տեղի ունեցած խոսակցության մեջբերումից:

Արամն ասում է Ռոստոմին. «Ռոստոմ ջա՛ն, եթե մեր կուսակցության ավանդույթներին անպատշաճ կնկատես նահանգապետության ստանձնելս, կհրաժարվեմ և իմ տեղը պաշտոնարար մի մարդ կճարենք...»

- Ի՞նչ ես ասում, Արա՛մ, դու չե՞ս զգում, որ Հայաստանի պետության հիմքն ես դնում: Նահանգապետ, նախարար և նախագահ բնական պիտի թվան պետական կյանքի մեջ»¹⁴:

Կարծում ենք՝ մեկնաբանությունների կարիք չկա:

Վասպուրականի նահանգապետության կյանքը կարճ տևեց, ընդամենը 70 օր: Ռուսական երկդիմի քաղաքականությունը հանգեցրեց Վասպուրականի հայության նահանջին և ողբերգությանը:

Ռուսական բանակի հրամանատարությունը նահանջի հրաման տվեց՝ մերժելով Արամի կառավարության և հայ կամավորական գնդերի դիմումը՝ թույլ տալ, որ կամավորները մնան Վան ժողովրդի հետ միասին և հարկ եղած պարագային դիմադրեն թշնամուն:

1916-17 թթ. Արամը հիմնականում գործում է Թիֆլիսում՝ զբաղվելով գաղթակա-նության խնդիրներով: 1917 թ. հիվանդությունն ստիպում է նրան մեկնելու Ղրիմ, ուր հանգստանալով գրում է նաև իր արժեքավոր, բայց դժբախտաբար կիսատ մնացած հուշերը:

1917 թ. դեկտեմբերի վերջերին, որպես Հայոց Ազգային Խորհրդի լիագոր, Արամը Թիֆլիսից մեկնում է Երևան, ուր ապրում և գործում է մինչև իր կյանքի վերջը:

Արամը Երևանում, հենց Ազգային Խորհրդի առաջին նիստում, «տվեց ընդարձակ զեկուցում ընդհանուր քաղաքական դրության ու Թիֆլիսում տիրող մտայնության մասին և հայտարարեց, որ ոչ մի տեղից չկա և ո՛չ մի հույս. պետք է լարել սեփական ուժերը՝ ապահովելու համար ճակատն ու թիկունքը»¹⁵:

Ընդունելով Արամի առաջարկը՝ Ազգային Խորհուրդը ընտրում է մի փոքրաթիվ, դյուրաշարժ մարմին՝ Հատուկ Կոմիտեն, որի կորիզը կազմում էին երեք հոգի՝ Արամը, Մկրտիչ Մուսինյանը և Արշալույս Աստվածատրյանը:

Այս շրջանից մինչև մայիսյան հերոսամարտերն ընդգրկող ժամանակահատվածում Արամի գործունեությունը հատուկ ուսումնասիրության թեմա է, որ կարող է ստվար հատոր կազմել: Սոսկ նշենք, որ Հատուկ Կոմիտեում և «դիկտատոր» հռչակվելուց հետո (1918 թ. մարտի սկիզբ) նրա կատարած վիթխարի աշխատանքները կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական առանձնահատուկ կողմերով:

¹⁴ Արամը, էջ 529:

¹⁵ Արամը, էջ 483:

Առաջին - Ճիշտ կերպով ըմբռնելով աշխարհում, Արևմտյան Հայաստանում և Կովկասում ստեղծված քաղաքական կացությունը՝ նա ձգտել է ժողովրդին անհիմն հույսերով չխաբել և ներշնչել է սեփական ուժերին ապավինելու գաղափարը, որի շուրջ համախմբել է նրան: Այս բոլորի վկայությունն են նրա հետևյալ խոսքերը. «Հայերով ոչ ոք չի հետաքրքրվում շոշափելի օգնություն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կա դավադրական վերաբերմունք: Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ Երկրի ներսը կարգ հաստատելու համար»¹⁶:

Եվ նա կարողացավ թե՛ ճակատը պաշտպանել և թե՛ Երկրի ներսը կարգ հաստատել:

Երկրորդ - Կարողացել է նահանջող ռուս զինվորների փոխարեն կազմակերպել և համախմբել հայ կովող ուժերին և առաքել հայ-թուրքական ռազմաճակատի կարևորագույն գծերը: Ջինվորական կոմիսար Դրոյի և Երևանի նահանգի հայկական զորքերի հրամանատար, զորավար Սիլիկյանի հետ նրա «գլխավոր մտահոգությունը ռազմաճակատի ամրացման ու թիկունքի անդորրության պահպանումն էր»: Հատուկ Կոմիտեի հենց առաջին նիստում որոշվում է զենքի տակ առնել մինչև 28 տարեկան բոլոր զինվորներին: Այս առիթով Արամը գրում է թիվ 1 կոչը, ուր ներկայացնելով քաղաքական կացության լրջությունը՝ հրահանգում է երեք օրվա պաշարով ներկայանալ տեղական զինվորական կենտրոններ: Նրա այս կոչին ժողովուրդը արձագանքում է դրականորեն:

Երրորդ - Չեզոքացնում կամ վտարում է այլազգի ներքին դավադիր տարրին և նրանց բնակավայրերը հատկացնում արևմտահայ գաղթականներին: Այս առումով նա համագործակցում է Ռուբենի հետ: Իսկ ինչպես վկայում է Ա. Ասվաճատրյանը՝ «մահմեդական խռովարարների սանձարձակությունները գնալով ընդարձակ չափեր էին առնում և գավառից աստիճանաբար մոտենում էին քաղաքին՝ Երևանին: Ըմբոստության դրոշակ էր պարզել Ջանգիրասարը, որը գտնվում էր Երևանի քթի տակ, մի քանի կիլոմետր քաղաքից: Ուլուխանլու երկաթուղու կայարանը գերեզմանոց էր դարձել հայերի համար. վագոններից հանում և անխնա կոտորում էին: Բանը հասավ այնտեղ, որ թուրքերը գլուխ բարձրացրեցին անգամ Երևանում»¹⁷:

1918 թ. փետրվարին Դրոն պաշարում է Ուլուխանլուն և խորտակում թուրքերի դիմադրությունը: Բացվում է երկաթուղային կապը Ալեքսանդրապոլի հետ և Ղամարլուի ճանապարհը: Պատժվում են նաև Կողբի, Սուրմալուի, Վեդիի, Ղամարլուի և Նոր Բայազետի թուրքերը:

Չորրորդ - Անխնայորեն պատժել է հայ դավադիր, բարոյալքություն սերմանող, ռազմաճակատը քայքայող դասալիք տարրին: Բնորոշ օրինակ է թոփալ Հակոբի խռովության ճնշումը, որն իր ամբոխով շրջապատում է Ազգային Խորհրդի շենքը՝ պահանջելով Արամի և մյուսների հրաժարականը և իրենց հանձնվելը:

Այդ պահը այսպես է նկարագրում Երևանի պարետ Ա. Շահխաթունին: Հավաքված ժողովրդին ճակատ մեկնելու կոչով դիմող Արամին թոփալ Հակոբը պատասխանում է. «Դու ինքդ գնա ճակատ: Կոմենդանտը ուզում է մեզ սարսափեցնել գնդացիների

¹⁶ «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, թիվ 4, 1964, էջ 70:

¹⁷ Նույն տեղում, էջ 77-78:

մասին խոսելով: Բայց ես ունեմ մաուզերներ: Ձեզ հինգ վայրկյան եմ տալիս, որպեսզի հանձնվեք: Թե ոչ՝ գիտեմ իմ անելիքը: Դուք բոլորդ էլ թուրքերին եք ծախված:

«Արամը պաղարյունով ասաց.-

«- Հի՞նգ վայրկյան միայն:

«Ամբոխը պատասխանեց.-

«- Այո՛, հինգ վայրկյան միայն:

«Արամը շատ հանդարտ կերպով և բոլորովին իր անձին տեր՝ նշան տվեց իր անձնական պահակին (վերջինս Արամի գաղտնի հրամանով թոփալ Հակոբի կողքին էր - Ա. Ն.).

«-Գևորգ, անմիջապես:

«Եվ մի րոպեում Գևորգը հանեց հրազենը իր թևից և զարկեց թոփալ Հակոբին, որը գետին ընկավ մեռած:

«Բոլոր ամբոխավարները գոչեցին.

«-Գեցցե՛ Արամ փաշան»¹⁸:

Այս մեջբերումը բավական է Արամի բնութագիրն ամբողջացնելու համար:

Հինգերորդ - Մայսիյան հերոսամարտի կազմակերպման և թուրքական առաջխաղացումը կանգնեցնելու առումով կատարել է առաջին դերակատարությունը: Նրա կազմակերպական ընդունակություններով հիմնականում պետք է պայմանավորել 10-12 հազար մարզված և կարգապահ կռվող ուժերի ստեղծումը, որոնք պարտության մատնեցին թուրքերին Մայսիյան հերոսամարտի օրերին: Ինչպես ճիշտ կերպով վկայում է Ս. Վրացյանը, «երբեք գուցե հայ կյանքում իշխանությունն ու հասարակությունը այնպիսի համերաշխություն չէին կազմել, քան 1918 թվի գարնան և ամառվա պատմական ամիսներին, Արարատյան դաշտում, Մասիսի հովանու ներքո»¹⁹:

Վեցերորդ - Մինչև 1918 թ. մայիսի 28-ը արդեն Արամը փաստորեն կառուցել է հայկական պետությունը: Արամի «դիկտատոր» դառնալուց հետո Հատուկ Կոմիտեի փոխարեն ստեղծվում է առանձին մի մարմին, որի անդամները կոչվում են վարիչներ (Վարիչների Մարմին): Մարմնի նախագահը և զինվորական գործերի վարիչն Արամն էր, ներքին գործերի վարիչը՝ Սահակ Թորոսյանը, պարենավորմանը՝ Մ. Մուսիկյանը, ելևտականը՝ Հովհաննես Մելիքյանը, ինքնապաշտպանությանը՝ Ա. Աստվածատրյանը, և այլն:

Այսպիսով, մինչև Հայաստանի Հանրապետության հռչակումը Արամն արդեն դրել էր նրա հիմքերը, և չեն սխալվում բոլոր նրանք, ովքեր նրան են համարում Առաջին Հանրապետության ստեղծողը:

Երբ Հայաստան ժամանեց Հ. Քաջազունու կառավարությունը, Արամը ստանձնեց ներքին գործոց նախարարի պարտականությունը, քանզի, ինչպես հաստատում է Ս. Վրացյանը, նա «միակ մարդն էր, որ այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ և անդորրություն պահել Երկրում և պետական շինարարություն սկսել»²⁰:

Ս. Վրացյանի տեսակետը հաստատում է Ռուբենը՝ ասելով. «Ներքին գործոց նախարարությունը այնպես, ինչպես Արամի ժամանակ կներկայանար, նրանցից հետո

¹⁸ Ա. Շահխաթունի, Սարդարաբադի հերոսամարտը և մահափորձ Արամ փաշայի դեմ, տե՛ս Արամը, էջ 520-521:

¹⁹ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 137:

²⁰ Նույն տեղում:

մինչև հանրապետության անկումը այլևս գոյություն չունեցավ»²¹:

«Արամի ժամանակ,- շարունակում է Ռուբենը,- ներքին գործոց նախարարության ասելով պետք էր հասկանալ պետության ֆիզիկական ուժը և նրա կառավարական մեխանիզմը, մարմնավորումը պետական և կուսակցական բարոյական հասկացողությանց, օրենքների գործադրման և պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կենտրոնը, որտեղ ամփոփվում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն ու ճիգերը»²²:

Դժբախտաբար, Արամից հետո ներքին գործոց նախարարությունը կորցրեց այն դերը, որ ուներ նրա ժամանակ, որի արդյունքում 1920 թ. գարնանը ներսից պայթելու աստիճանին հասավ Հայաստանի Հանրապետությունը: Եվ միայն Բյուրո-Կառավարությունում ներքին գործոց նախարարի պաշտոնը ստանձնած Ռուբեն Տեր-Մինասյանը փորձեց առաջնորդվել իր սիրելի ընկերոջ դրույթներով, բայց, ավաղ, արդեն ուշ էր:

1918 թ. դեկտեմբերին Արամը վարակվում է բժավոր տիֆով և տառապում մինչև 1919 թ. հունվարի 29-ը, երբ կնքում է իր մահկանացուն՝ թևաթափ անելով ողջ հայությանը:

Թաղման օրը «Հայաստանի մայրաքաղաքը համակված էր ընդհանուր սուգով...»:

²¹ Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ 3(7), էջ 311:

²² Նույն տեղում, էջ 311-312: